


3838

39




Ա. Ա. ԿՈՒՐՆՈՍԵՆԿՈ

# ԽՐՁԻԹ-ՀԱԲՈՐԱՏՈՐԻԱ

---

---



ԳՅՈՒՂՂՐԱՑ

1936

ՅԵՐԵՎԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

374.2


4-96

Ա. Ա. ԿՈՒՐՆՈՍԵՆԿՈ

## ԽՐԱԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԵԱՐԿՈՎԻ ՆԱՀԱՆԴԻ ԿՐԵՄԵՆՁՈՒԴԻ ՇՐՋԱՆԻ ԸՆԿ. ՊԵՏՐՈՎՍԿՈՎ  
ՎԵՎԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԽՍՀՄ ԱՌԱՋԻՆ ԽՐԱԻԹ-ԼԱԲՈՐ-  
ՈՐԻԱՅԻ ԱՌԵԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԸ

749



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1936

3838

29 MAY 2013

52. 700

## ՀՆԿ. Պ. ՊՈՍՏԻՇԵՎԻ ՆԱՄԱԿԸ

Ակետանձր Անդրեյևիչ Կումուսնիկովին յեզ Օրա օգծականներ՝ Կրթեա-  
ցագի ջրանի Պատրավակու անվան Կոլտնանուրյան հարվածային կոմ-  
միտիառապահներին

## Թանկագին Ալեքսանդր Անդրեյևիչ

Վողջունում եմ ձեր նախաձեռնությունը  
Խրճիթ-լաբորատորիայի կազմակերպման գործը  
մեծ և պետքական գործ և կոլտնանության մեջ.  
Նա իրեն հարյուրապատիկ կարդարացնի, յեթե  
գործը մինչեւ վերջը աարվի. իսկ յես դրանում  
չեմ կասկածում. Դուք մի շփոթվեք ռաւաշն անհա-  
ջողություններից, հաստատակամ և համառորեն  
առաջ տարեք խրճիթ-լաբորատորիայի կազմա-  
կերպումը և դուք կհաղթեք.

Խրճիթը—ագրոկուլտուրայի այդ ոլոխը—կը-  
նկանի իր կոչումը. Այդ խրճիթ-լաբորատորիա-  
յում պիտի ունենալ այն բոլորի նմուշները, ինչ  
վոր արտադրում և ձեր կոլտնանությունը. Այն-  
տեղ պիտի լինեն անասունների համար կերի  
նմուշներ, կեր պատրաստելու փորձ՝ համաձայն



25535-60

8888

անասնաբուժական պայմանների: Հարկավոր եր  
կոր այնտեղ լինեն նույնպես մշասատուների ռե-  
սակներ և նրանց դեմ պայքարելու մեթոզները:  
Խրճիթի աշխատանքն այնպես պիտի կարգավո-  
րել, վոր դուք կարողանաք անցկացնել բար-  
փորձերը:

Գետք և ունենալ գյուղատնտեսական լավ  
գրադարան: Եես համոզված եմ, վոր ձեղ կողնեն  
գյուղատնտեսները, անասնաբուժները, անասնա-  
բուժները, մարդկողվարչությունը և հենց ինքը՝  
ընկ. Նուսը (մարդկողվարչության վարիչը): Մար-  
դում խրճիթ-լարորատորիաներին բոլորը կողնեն:  
Այդպիսի խրճիթների ոգնության և կաղմակերպ-  
ման գործին չեն մերժի մասնակցել նաև մյուս  
մարդերը: Այդ գործին կողնեն համառոկաբինա-  
կան Դյուզատնտեսական Ակադեմիան, գյուղատն-  
տեսական ինստիտուտները, անասնաբուժական  
ինստիտուտները, նմանապես և մեր գյուղատը-  
տեսական բնագավառի գիտնականները, գյուղա-  
տնտեսական բարձր ուսումնական հաստատու-  
թյունների ուսանողները, գյուղատնտեսները,  
անասնաբուժները և անասնաբուժական աշխա-  
տողները: Հողմողկոմատը, և հենց ժողկոմն ինքն  
ել կողնի: Այդ գործին բոլորը կիպչեն:

Կողնեն նաև շեֆերը և առաջին հերթին քա-  
ղաքի կոմյերիտությունը:

Վերևում հիշված բոլոր կազմակերպություն-  
ներն ու աշխատողներն ոգնություն ցույց կտան  
վոչ թե պատահականորեն, վոչ թե նրա համար,  
վոր յես նրանց դրդում եմ գետի կոլեկտիվ աշխ-

անսության համար անհրաժեշտ այս գործը, այլ  
կկպչեն իրենց կամքով. իրենց իրենց պարտակա-  
նություն՝ կոլտնտեսությունների նկատմամբ ռե-  
նեցած սիրուց և կողնեն կանոնավոր և զարու-  
նակ: Նրանք իրենք կկազմակերպեն և կսարքա-  
վորեն խրճիթ-լարորատորիաներ՝ Խարկովի մար-  
դում և ամբողջ Ուկրաինայում: Այդ խրճիթնե-  
րում գյուղատնտեսական գասախոսություններ  
կկարգան:

Մարդկոմի կուլտազրոպը և գյուղատնտեսական  
բաժինը խրճիթներում գյուղատնտեսական գրքե-  
րի վաճառք կկազմակերպեն: ՈՒԿ(Բ)Կ կենտկոմի  
կուլտազրոպը և գյուղբաժինն ու կոմսոմոլի մարդ-  
կոմներն ոգնության կդան: Եեվ ահա գործն  
առաջ կդնա, բոլցնիկյան աշխատանքը կեռա,  
թանկագին Ալեքսանդր Անդրեյեվիչ:

Ընդունեցեք վողջույններս: Ամուր սեղմում  
եմ ձեր ձեռքը:

Ձեր Պ. Պոսիչեվ

14 սպտիւլի 1934 թ., Խարկով

## ԱՅՍ ԳՐՔԻ ՑԵՎ ԽՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Այս գրքի հեղինակ Ալեքսեյ Անդրեյեվիչ Կուրնանկոն՝ Խարկովի մարզի Կրեմենչուգի շրջանի Զերվոննագնամենսկի գյուղինորհրդի Պետրովկայու անվան գյուղատնտեսական արտելի կոլտնտեսական եւ Նա 56 տարեկան եւ Մինչ հեղափոխությունը յուր հայրենիքում և Դրիմում նա մնձ մասսամբ աշխատել ե կուլակունեվորների մոտ՝ վորպես բատրակ։ Ընկ. Կումանոսենկոն իրենց գյուղատնտեսական արտելի կազմակերպողնեւ և յերկու տարի աշխատել ե վորպես նույն կոլտընախության նախագահ։

1934 թվին ընկ. Կումանոսենկոն առաջինը յեղավագր արձագանքեց ընկ. Պ. Պ. Պոստիշեվի կոչին՝ կումանոսեսություններում խրճիթ-լաբորատորիաներ կազմակերպելու մասին և Պետրովկայու անվան կոլտնտեսաւթյան ակտիվի, ծեր կոլտնտեսականների ու յերեսասարդության հետ միասին կազմակերպեց խրճիթ-լաբորատորիա։

Այս գրքում նա պատմում է, թե ինչով սկսվեց խրճիթ-լաբորատորիայի գործունեյությունը, ինչպես

Ե նա դրել գանապան փորձեր, ինչպես և ոգնել յուր  
կոլտնտեսությանը՝ գյուղատնտեսական կամպանիա-  
ներ անցկացնելու գործում և այլն:

Ըսկ. Կուռնոսնկոյի գրքույկը կարող և սպաս-  
գործվել խթճիթ-լարորատորիաների վարիչների և ախ-  
տիվի կողմից՝ ամենորյա աշխատանքում, վորպես  
գործնական ձեռնարկ:

## ԽՆՉՊԵՍ ՇՆՈՒՆԴ ԱՌԱՎ ՄԵՐ ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ

Վաղուց ե, վոր յես հետաքրքրվում եմ մեր գաշ-  
տերի բերքատվությունը բարձրացնելու խնդրով: Դեռ  
էեղափոխությունից առաջ, իմ հողաբաժնում սկսել եմ  
գյուղատնտեսական փորձեր կատարել և կիրառել ագ-  
րոնոմիական դիտության խորհուրդները:

Մեր գյուղում յես առաջինն եմ սկսել ախտահա-  
նել սերմացուն, սովորական հասարակ սերմը փոխա-  
րինել տեսակավոր սերմով, և հողը պարարտացնել  
հանքային պարարտանյութերով:

Մեր գյուղում յես առաջինը մացրի վազահաս  
կարտոֆիլ մշակույթը: Զմեռվա վերջին յես աճեցնում  
եյի կարտոֆիլ պալարները: հենց վոր անցնում եյին  
գարնան ցրտերը, յես այդ պալարները ծիլերի հետ  
միասին թաղում եյի հողի մեջ: Այդ փորձը լավ հետե-  
ժանքներ տվեց: մայիսի վերջերին արգեն հնարավոր եր  
նոր կարտոֆիլ հանել: Յերբ յես հաշվեցի վազահաս  
կարտոֆիլ բերքը, մեկ գեսատինից ստացվեց մինչև  
1200 փութ:

Բացի այդ, իմ կարտոֆիլի բերքահավաքն այն-  
քան վաղ և կատարվում, վոր նրանից հետո հնարա-

Գոր եր լինում ցանել խոզանային կուլտուրաներ, որինակ կորեկ կամ արինջ (հրեակա): Այսպիսով, ուրեմնավոր եր մի տարվա ընթացքում մի դաշտից յերկու անգամ բերք վերցնել:

Բայց մինչ հեղափոխությունը ինչքան ել փարձեր եյի կատարում, ինչքան ել աշխատում եյի կիրառել գիտության ցուցմունքները, միևնույն ե, իմ աընթեսական գրությունը չեր բարելավվում: Իմ հայրը քավոր եր չքավոր եյի ապրում և յես. մի խղճուկ էտոր հողից շատ բան վերցնել չես կարող, Ավելի շատ բարակություն եյի անուս, քան թե իմ տնտեսությամբ զբաղվում:

Ամբողջ ուժն այն ժամանակ մեր գյուղական կուլտների ձեռքին եր: Մենք՝ չքավորներս ինչպիսի բարելավումներ ել վոր կատարում եյինք մեր հողի վրա, միևնույն ե, հացը մեզ չեր բավարարում, և ամեն առջի գարնանը ստիպված եյինք սերմացու խնդրել հենց նույն կուլտակներից՝ բուրդյուղայից, Ֆեղոր Մազուրացից և ուրիշներից: Բացի դրանից, զանազան ազգատեխնիկական բարելավումների համար պահանջվում են խոշոր միջոցներ, իսկ այն ժամանակ չքավորությունը վմբառեղից կարող եր վերցնել այդ միջոցները:

Այժմ միայն, կոլեկտիվացումից հետ, գյուղում լայն առավարեղ ե բացվել գյուղատնտեսական փորձեր կատարելու և գիտական հողագործության ու անառնապահության ամենակատարելագործված միջոցները կիրառելու համար: Կոլտնտնեսությունը՝ դա նախկին փորձառու միջակ կամ չքավոր գյուղացին չե, զանազան բարելավումների վրա փորձեր կատարելու համար նրա մոտ բավականաչափ միջոցներ, հնարավորությունը

թյուններ և մարդիկ կդժնվեն: Զե, վոր մենք՝ փոք ձառու կոլտնտեսականներս, ինչպես և ամեն մի կուտեսական, խիստ շահագրգոված ենք, վոր կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը շարունակ բարձրանա, վոր կոլտնտեսային հուն ավելի ու ավելի աճի և լավանա:

Ճիշտ ե, մինչև 1934 թ. մեր փորձառու կուտքատեսականներից շատերն աշխատում եյին մի տեսակ անկազմակերպ, միմյանցից անջատ. չկար կոլտնտեսության ներսում այնպիսի մի կենտրոն, վորի չուրջը կարողանալին համախմբվել փորձառուները և վորը հատուկ ծրագրով ղեկավարեր նրանց աշխատանքը: Բայց այժմ արդեն կա այդպիսի կենտրոն, դա կոլտնտեսային խրնիք-լաբորատորիան ե:

Խորհրդավոր Միության մեջ կազմակերպված Խրճիթ-լաբորատորիաներից առաջիններից մեկը մեր՝ Պետրովսկու անվան կոլտնտեսության ե (Խարկովի մարզի Կրեմենչուգի շրջան), վորս արդեն աշխատանքի վորոշ փորձ ունի: Հենց այդ փորձերին յես ցանկանում եմ, հնարավորության չափ, ծանոթացնել ընկեր կոլտնտեսականներին:

Դա շատ կարևոր և լուրջ գործ և լուրաքանչյաւը կոլտնտեսության համար, ուստի և յես կուսած սկզբից, թե ինչպես մեր մեջ խրճիթ-լաբորատորիա կազմակերպելու միաժամանակ հղացավ, ինչպես կազմակերպեցինք այն և այյին:

\* \*

1934 թ. մարտի յերկրորդ կեսերին Խարկովում, Խարկովի մարզի բանդյուղթղթակիցների հավաք եր հրավիրվել: Հավաքին կանչված ելի և յես՝ վորապես մեր

ՀՐՅԱՆԱՅԻՆ «ԿՐԵՄԵՆՀՈՎՈՎԻ աշխատավոր» թերթի գյուղ-  
թղթակից:

Ուկրաինալի կոմունիստական կուսակցության  
կենտրոնական կոմիտեի քարտուղար ընկ. Պավել  
Պետրովիչ Պոստիչեվը հավաքում հանդես յեկալ «Կուս-  
ակցության 17-րդ համագումարը և բանգլութեա-  
կիցների ինդիրները» նյութի մասին զեկուցումով Նո-  
հոչ արեց գյուղթղթակիցներին, թափանցել կոլտնաե-  
ռային արտադրության բոլոր մանրամասնությունների  
մեջ և ի միջի այլոց հետեւալն ասաց.

«Յես կառաջարկելի գյուղթղթակիցներին աշխատանքի  
մի ձև ևս կրասեր Քալիո ևս կոլտնտեսություն, այնաեղ  
և դաշտավար գյուղատեսեն կա, և գյուղթղթակիցներ, և  
կոմյերիտականներ, և անկուսակցականներ ու կուսակցա-  
կան առաջավոր կոլտնտեսականներ Բայց նրանք կոլտն-  
տեսական ոջախ չունեն ւես ձեզ խորհուրդ եմ տալիս անց-  
նել այդ գործը կազմակերպելուն Յուրաքանչյուր կոլտնտե-  
սությունում կարելի յե գտնել մը կարգին իրմ թի Նորո-  
գեց, նք այդ իրճիթը և այս գարձերե լարուատուրիայի պես  
մի բան Հավաքներ հատուկ արկներում ալյալ կոլտնտե-  
սության արտադրությունը բոլոր մշակույթները՝ հացահատիկային  
տեխնիկական բույսեր, խոտեր ծարենեք գիտական ու գյու-  
ղատանտեսական պլակատներ և գանատան նմուշներ (Խոսպա-  
նատեսեր: Այդ, թեկուզ պրիմետիվ, լարուատուրիայում հացա-  
հատիկների ծեցման և աճեցման փորձեր կատարելու հնարի-  
ք յուրաքանչյուր ստեղծեցեր Արժանագրեցեք յուրաքանչյուր  
կուլտուրայի աճ և ան ընթացքը: Կազմակերպեցեք կոնսուլ-  
տացիա՝ անառնազնության, կերի բաղայի, անասունների  
հրագությունների, նրանց ինչպես հարկն և կերակրելու  
մեթոդների և խեմամբերի շուրջը»:

Ըսկ. Պոստիչեվի խոսքերը խորը տպավորվեցին  
ու մեջ: Յես ինքս ել առաջ հաճախ ելի մտածել այն

մասին, թե ինչպես պետք ե կարգի բերել փորձնական  
աշխատանքը կոլտնտեսությունում, բայց վոչ մի գործ-  
նական լեզրակացության չեյի հանգել Սինչղեռ  
Պավել Պետրովիչն այնպես պարզ ու վորոշ եր դնում  
հարցը, վոր անհասկանալի վոչինչ չեր մնում:

Յես հենց այստեղ հաստատ վորոշեցի անմիջապես  
կատարել ընկ. Պոստիչեվի հրահանգը, այսինքն՝ կազմո-  
կերպել մեզ մոտ՝ կոլտնտեսությունում խրճիթ-լարու-  
րատորիա և կանոնավորել նրա աշխատանքը:

Հավաքից հետո, Խարկովից վերադառնալու ժա-  
մանակ, ճանապարհին յես յերկար մտածում եյի, թե  
ինչից պետք ե սկսել: Պարզ ե, մտածում եյի յես, վոչ  
ընկ. Պոստիչեվի հրահանգը՝ խրճիթ-լարուրատորիա կազ-  
մակերպելու մասին՝ կարելի յե կատարել միայն կոլ-  
տնտեսության ակտիվի և ղեկավարների հետ միասին:  
Յեզ վորպեսպի առաջին որերից խրճիթ-լարուրատորիա-  
լի աշխատանքը դրվի գործնական հիմքերի վրա, ան-  
հրաժեշտ ե նրա զուրջը համախմբել այն կոլտնտեսա-  
կաններին, վորոնք հետաքրքրվում են ազգութեանի-  
կայով և ունեն վորոշ պատրաստականություն:

Մեր կոլտնտեսությունում ալդպիսի մարդիկ ար-  
գեն կային: 1933-34 թվի ձմեռը մեզ մոտ, կոլտնտե-  
սոյին ազգութեանիկական խմբակում, լեռանդով պա-  
րագում եյին 40-ից ավելի կոլտնտեսականներ, նրանք  
ազգութեանիկա ելին ուսումնասիրում, ունենում ելին  
գործնական պարապմունքներ և վերջում բոլորն ել  
հաջող քննություն տվին ազգութեանիկայից:

Յես մեծ հույս ունեյի խոշոր սժանդակություն  
ստանալ մեր կոմյերիտամիության բջջից, առանձնապես  
նրա քարտուղար իվան Ֆեոդորովիչ Պավել Պետրովիչը (նա-

հիմա մեր կոլտնտեսության նոխագահ ե): Դեռ մինչև  
Խրճիթ-լաբորատորիայի կաղմակերպումը յես մեր  
կոմիերիտականների հետ շատ մոտ եյիր Այդ մտերժությունն  
սկսվել է 1933 թվից: Այդ ժամանակ մեր կոմիերիտականներ վանյա Պաշտենկոն և Վանյա Կորնիյենկոն վորոշել եյին յերիտասարդական բրիգադ կազմակերպել և աշխատանքն այնպես կանոնավոր հիմքերի վրա դնել վոր իբրև որինակ ծառայի ամբողջ կրեմնչուգի շրջանի համար: 75 կոմիերիտականներ և ջահել կոլտնտեսականներ մտան բրիգադի մեջ, Կորմանտեսության վարչությունն առաջին արտադրական հոգածաւը հատկացրեց բրիգադին:

Հենց վոր բրիգադը կաղմակերպվեց, կոմիերիտականներն առաջին հերթին դիմեցին ինձ:

— Դու, Ալեքսեյ Անդրեյեվիչ, իսկական կոլտնտեսական գյուղատնտես ես, ինչով կարող ես, մեզ ոգնիր:

— Լավ, — պատասխանեցի յես, — կողնեմ, միայն մի պայմանով, վոր ինձ լսեք և այնպես անեք, ինչպես յես ձեզ կառեմ:

Մեր այս պայմանը կոմիերիտականները անշեղորդն կատարեցին, յես ել նրանց մեծ ոգնություն ցույց տվի ագրոտեխնիկական խորհուրդներով ու ցուցմունքներով: Յերիտասարդներն իսկապես վոր որինակելի աշխատանք եյին կատարում: Այդ աշխատանքի մասին մեր շրջանի բոլոր կոլտնտեսականները լավ գիտեն: Անձ, կոմիերիտական բրիգադի հետ միատեղ այդ աշխատանքն եր, վոր կոմիերիտականներին իմ մտերիմ բարեկամները գարձրեց: Յես սովորություն դարձրի յուրաքանչյուր նոր գործի համար առաջին հերթին կոմիերիտական բջջին գիմել: Խրճիթ-լաբորատորիայի

թնդրով ել յես կոմիերիտականների մոտ գնացի: Հայի յեղավ նրանց յերկար համոզել ու ապացուցել:

Կոմիերիտմիության բջջի քարտուղար Պաշտենկոն էնց իմ առաջին խռոքերից հասկացավ, թե ինչ ահագին արդյունք կարող է ստացվել խրճիթ-լաբորատորիայից: այդ մասին նա անմիջապես հարց հարուցեց կոլտնտեսության կուսակցական կաղմակերպության և վարչության առաջ:

Այդ բոլորը կատարվեց մեկ որում: Իսկ իմ գտնու յերկրորդ որն արդեն վարչությունը կոլտնտեսականների ընդհանուր ժողով գումարեց:

Ընդհանուր ժողովը բազմամարդ եր: Մարզային հավաքի մասին իմ հաշվետվությունը յեկել եյին լսեցու գյուղթղթակիցները, հարվածալին կոլտնտեսականները, կոմիերիտականները, անկուսակցական յերիտասարդությունը: Յեկան նախ ծեր ագրուավագները (Դրիգորիյ Վոլչայը, Վասիլի Տրոխիմենկոն, Դիմիտրիյ Պոպենկոն), իմ զեկուցումը շատ ուշադիր լսեցին և բարձարիվ հարցեր տվին: Հավաքում ինչ վոր խոսել եք ընկ. Պոստիշեվը, յես բոլորը պատմեցի ժողովականներին և վերջում առաջարկեցի մեր կոլտնտեսությունում խրճիթ-լաբորատորիա կաղմակերպել:

#### ԵԽԳԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ժողովի հետեւյալ որը յես, կոլտնտեսության նախագահ Վասիլ Կոմարը և կուսհրահանգիչ Աֆանասի Նեշիտալյոն գնացինք խրճիթ-լաբորատորիայի համար հարմար շենք վնասելու:

Մենք հարմար գտանք մի անբնակ տուն, վորն առաջ պատկանում եր մի արտաքսված կուլակի: Դա

մի շատ ընդարձակ ու լավ, յերկու հարկից բաղկացած էնք եր. բակում կային սժանդակ սնատեսական շենքեր. անատեղի ընդարձակ հողամասն ուներ ալզի և տղատ հողամաս՝ բանջարանոցի համար. Տունը գանձվում եր Կագամլիկ գետի ափին՝ մի բարձրադիր անգում.

Բայց տունը խիստ անուշադրության եր մատնը ված. անհրաժեշտ եր վերանորոգել այն և այնպես հարմարեցնել խրճիթ-լաբորատորիայի համար, վոր հարավոր լիներ այստեղ զանազան պարագմունքներ ունենալ, պատերից պլակատներ, աղյուսակներ ու փաղաթեր կախել և սենյակներում զանազան անօթներ ու պարագաներ տեղափորել:

Այս գործումնելինձ ոգնության հասան լիրճիթ-լաբորատորիայի առաջին ակտիվիստները՝ կոմյերիտականները:

Ենք տրամադրելու հետեւալ որը, վազ առավոտյան, խրճիթ-լաբորատորիայի բակը յեկան կոմյերիտականներ՝ Մարիա Կորնիյենկոն, Յելենա Կոմարը, Նատայա Տրոխիմենկոն, Մարիա Շամբայը և ուրիշները: Երանք վորոշեցին՝ թե ով ինչ պետք և անի և անցուն յեանդուն աշխատանքի:

Մարիա Կորնիյենկոն, Նատայա Տրոխիմենկոն և Վասիլի Ոստապենկոն ընդամենը յերեք ժամվա ընթացքում քանդեցին խրճիթի մեջաեղում կանգնած մեն, անմռանի վառարանը:

Տաքության համար այդ վառարանը բոլորովին անպետք եր. Մեծ վառարանը քանդելուց հետո մեր երեթը չցրտեց, վորովհետև նրա մեջ մի ուրիշ վառարան ել կար՝ շատ հարմար շինված, վորը մեծ աեղ ել

չեր բոնում: Խրճիթ-լաբորատորիայի շենքը պետք է տաք լինի. չե վոր այստեղ ձմեռը ազրոխմբակների պարապմունքներ՝ ին լինելու, մերմը հետազոտության և յենթարկվելու, սուուղվելու յեն աշխանացանի նը մուշները և այլն:

Վառարանը քանդելուց հետո աղջկերքը գուրս տարան խրճիթի աղքը և լավ մաքրեցին այն, հետո ծեփեցին և պատերն ու առաստաղն սպիտակացրին, իսկ պատուհաններն ու դռները ներկեցին բաց գույնի ներկով:

Մինույն ժամանակ բակում ել յեռուն աշխատանք եր տարվում. կոմյերիտականներն սկսեցին կարգի բերել վաղուց ի վեր յերեսի վրա թողնված պաղառու այդին, ծառերի տակը փորեցին, այդու մեջ ճանապարհներ բաց արքն, ծառերի բները կրով սպիտակացրին, ծառերը մաքրեցին թրթուրներց և մյուս վնասատուներից: Մենք հենց այդտեղ ել վորովհեցինք մեր այդին դարձնել ցուցադրական՝ ամբողջ գյուղի համար:

Խրճիթ-լաբորատորիայի բակում յերեք սրահատուն կար. մենք այդ շենքերն ել վերանորոգեցինք, ծեփեցինք ու սպիտակացրինք, պատերի մեջ պատուհաններ բացինք, վոր լույս լինի: Ծուտով մենք այդ սրահատուներում տեղափորեցինք մեր փորձերի համար վերցրած թուզունները, ճաղարները, վոչխարը:

Խրճիթ-լաբորատորիայի ամբողջ հողամասը մենք լավ ցանկապատեցինք: Հատկապես ամուր ցանկապատեցինք հողամասի փողոցին կից մասը, վորպեսդի անառուներ չմտնին: Ենիսեցինք նոր, կամարաձև զարպամ, դարպասի ճակատին փայտից պատրաստված գունավոր



տառերով ցուցանակ փակցրինք հետևյալ ժակտդրությամբ.

## «Պ. Պ. ՊՈՍՏԻՇԵՎԻ ԱՆՎԱԼՆ

### ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ բակը մաքուր եր. բակից

ցած դեպի Կադամլիկ գետը բացված եր լայն ճանապարհ։

Ապրիլի 1-ին խրճիթն արգեն բոլորովին կարգի յեր բերված։ Յերեսի վրա թողնված կուլակի տունը անձանաշելի յեր դարձել սենյակներն ընդարձակ և լուսավոր, շրջապատը մաքուր։ Այժմ կարելի յեր արգեն անցնել խրճիթի սարքավորմանը։ Աչքի ընկնող տեղում մենք կախ տվինք ընկ. ընկ. Ստալինի, Վորոշիլովի, Պոստիշեվի նկարները։ Պատերի վրա դյուզատնտեսական պլակատներ փակցրինք, վորոնք ցույց եյին տալիս, թե ինչպես են աճում հացահատիկները, բանջարեղինները և այլ զանազան կուլտուրաները, և ինչպիսի ազրուելինեկա յե պահանջվում այդ կուլտուրաների մշակության համար։ Ունենք նաև վնասատուների, դյուզատնտեսական կուլտուրաների հիվանդությունների գեմ պայքարելու և դյուզատնտեսական մեքենաների մասին պլակատներ։

Դոլբիցի աշակերտները խրճիթ-լաբորատորիայի համար գիտադրաներ պատրաստեցին՝ թե մեր կոլտնտեսությունը 1934 թվին զանազան կուլտուրաների վորքան ցանք պետք ե անի, վորքան բերք պետք ե վերցնի, և վորքան կստանա աշխորի համար՝ հացով ե փողով։

Սենյակներից մեկի պատին մենք դարակներ ամ-

բացրինք և նրանց վրա դասավորեցինք մեր գյուղատնտեսական գրքերը։ Մեզ մոտ ձմեռն ազրուելինիկական խմբակներն աշխատում եյին և գրադարանը խըմբակների անդամներին շատ եր ոգնում։ Ձիշտ ե, գրքեր մենք առայժմ քիչ ունենք, բայց դե զրքեր ձեռքելը դժվար չե։

Խրճիթ-լաբորատորիայի կազմակերպման հենց առաջին որերից մենք մտածում եյինք լաբորատորական հատուկ սարքավորում ձեռք բերելու մասին՝ սերմերն անալիզի յենթարկելու, վնասատուներին հայտաբերելու համար և այլն։ Այդ սարքավորման մի մասը կոլտնտեսությունն ուներ, իսկ մեծ մասն ստացանք Խարկովից և Կրեմենչուգից։

Այդպիսով ձեռք բերինք տեխնիկական կենուք իր կշռաքարերով, չորացնող պահութեա, զերմախափեր, զանազան փորձանորենք և յերկարավիզ սրվակներ, սերմային ուսություններ (սեմյանեա պարու) մանրադիտակ, խօսքացույց, ովերենքարաբանական յեվ այլ գործիքներ։

Հետագալում մանրամասն կդրեմ, թե ինչի համար և ինչպես եյինք մենք ողտագործում այդ սարքավորումը, իսկ այժմ կպատմեմ, թե մեր խրճիթ-լաբորատորիան 1934 թվի գարնանն ինչով սկսեց իր գործնական աշխատանքները։

ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՌԱՆՔՆԵՐԸ

1934 թ. գարունը վաղ բացվեց։ Յեղանակը տաք եր ու չոր։ Յուրաքանչյուր որը թանգ արժեր. գարնանացանն անհրաժեշտ եր վերջացնել ամենակարծամանակում։

Շատ կոլտնտեսություններ 1933-34 թվի ձմեռը

սերմացուն լավ չելին պահել այդ պատճառով կուսակցությունը և կառավարությունը պահանջ առաջարկեցին՝ ցանել միմիայն ստուգված, մոլախոտերից մաքրված և լավ ծրունակություն ունեցող սերմեր:

Այսպիսով սերմացուի ծրունակությունն ստուգելը կուտանտեսության ամենակարևոր գործերից մեկն երբ Այդ գործով առաջին հերթին փորոշեց զբաղվել իրմիթ-լաբորատորիան:

Մինչ կոմիթիտականները կարգի ելին բերում խրճիթ-լաբորատորիայի ջենքը, հյուսն իվան կոստեն-կոն խրճիթի պատվերով պատրաստեց 30 արկղ՝ սերմեր աճեցնելու համար: Իրենց չափերով արկղները պետք են լինեն այն մեծության, ինչ վոր սենյակի ծաղիկների արկղների մեծությունն են: Կոստենկոն մեր պատվերը շատ արագ և ճշտությամբ կատարեց:

Արկղները պատրաստելուց անմիջապես հետո, յես, դաշտավար Մագուրը, բանջարարաւծ Պոպենկոն և այգեգործ Պոխտոնն անցանք սերմերն աճեցնելու գործին: Արկղները հողով լցրինք են զանազան կուլտուրաներ ցանեցինք՝ նրանց ձլունակությունը փորոշեռա համար:

Հողը մենք վերցնում ենինք կոլտնտեսական դաշտի այն հողամասերից, վորտեղ հետագայում ցանվելու ելին այդ կուլտուրաները: Արկղներում ցանեցինք ինչպես հայտնատիկային, նույնպես և բանջարանոցային կուլտուրաներ: Այդ աշխատանքի ընթացքում մեզ շատ ովնեց կոմիթիտմիության բջիջի քարտուղար իվան Պաշտենկոն:

Այստեղ պետք են ասեմ, վոր բոլորովին ել պարտադիր չեն սերմն անպայման հոգ լցրած արկղներում

աճեցնել, թեալետ և հողը վերցվում են հենց նույն հողամասերից, վորտեղ հետագայում ցանվելու յեն ծլունակության փորձի յենթակա կուլտուրանները, այսուամենայնիվ, դաշտի ընական որայժաններն աճեցնաթիւամբ ստեղծել հնարավոր չե: Բացի այդ, հողի մեջ կարող են լինել զանազան սնկալին հիվանդությունների սաղմեր:

Դրա համար ել ավելի լավ են ստուգել սերմի ծլունակությունը վոչ թե հողի մեջ, այլ ծծան թղթի, թաց շորի կտորի վրա կամ թե լվացված ու չկացրած ավաղի մեջ: Մեր խրճիթ-լաբորատորիան այժմ սերմն աճեցնում են ափսեների մեջ զրված մշտական թաց շորի կտորների վրա:

Փորձի յենթակա սերմն արկղներում ցանելուց հետո մենք սկսեցինք ամեն որ ուշադիր հետեւ նըրանց: Արձանագրելու հատուկ որագիր-մատյան կազմեցինք: Այդ մատյանում մենք ճշտորեն գրում եյինք թե մեր և ցանված յուրաքանչյուր կուլտուրացի սերմը, քանի հատիկ և ցանածը և յերբ են յերկացել ծիւրը: 10 կամ ավելի ոք անցնելուց հետո (նայած թե ինչ կուլտուրա լիր ցանված) մենք հաշվում եյինք, թե քանի հատիկ և ծիւրը: Ընդունելով ցանված հատիկների քանակը 100, մենք վորոշում եյինք ծլունակության տոկոսը:

Ցանած յուրաքանչյուր արկղի վրա մենք գրել եյինք կուլտուրայի անունը և տեսակը: Որինակ՝ արկղզներից մեկի վրա զրված են «Յերկարք զարի № 105—72», իսկ մատյանում զրված են, վոր մաքուր տեսակի այդ զարու սերմից 1934 թվի ապրիլի 2-ին ցանված և ընդամենը 110 հատիկ: Իսկ ցանելուց 10 ոք հետո մենք այդ մակագրությունը լրացրինք այսպես:

Մէջ ապրիլի 11-ին, ծլունակությունը 98 տոկոս եւ Մյուս արկղներում մենք ցանել ենք զիկ, վարսակ, «միննեղուտա» տեսակի յեզիպտացորեն, կորեկ, արինջ, սիսեռ, արեածաղիկ, գաղար, ձմերուկ, սեխ և ուրիշ կուլտուրաներ:

Յուրաքանչյուր արկղում դրված եր մեկտեսն անոթ, վորոնց մեջ լցված եր այնքան սերմ, վորքան ցանված եր հողի մեջ: Որինակ՝ արկղներից մեկում ապրիլի 4-ին բողկի սերմ եր ցանվել նույն արկղում դրել եյինք մի անոթ բողկի 50 սերմով: Այդ նշանակում եր, վոր արկղում ել 50 սերմ եր ցանված:

Սերմով անոթները զնում եյինք նրա համար, վորպեսզի ծլած սերմների քանակն անոթում յեղածի ճետ համեմատելով դանելինք տվյալ կուլտուրայի ծլաւնակության տոկոսը:

Ապրիլի 6-ին խրճիթ-լարորատորիա յեկավ ողակավար իվան Տրոխիմնիկոն՝ յուր ողակի կոլտնտեսականներ իվան Շամբալի և Գրիգորի Վոլոչաչի հետ: Նրանք յեկել ելին իմանալու բողկի ծլունակության մասին: Նրանց հետ միասին յես հաշվեցի քանի հատիկ կար անոթում և քանիսն եր ծեկ արկղի մեջ: Դուրս յեկավ վոր բողկը ծեկ ե 100 տոկոսով:

Այս ձեռվի խրճիթ-լարորատորիան վորոշեց գարու, վարսակի, գալուսն ցորենի և այլ կուլտուրաների ծլունակության տոկոսը: Կուլտուրաների մեծ մասի ծլունակությունը լավ եր՝ սահմանված նորմայից վոչ ցածր: Իսկ յեթե պարզվում եր, վոր փորձի լենթակա սերմի ծլունակության տոկոսը նորմայից ցածր ե, խրճիթ-լարորատորիան սահմանում եր՝ թե ինչ չափով սկսում

ցանքի նորման բարձրացնել: Այդ նոր նորմաներն անմիջապես հայտնվում եյին կոլտնտեսության վարչությանը, իսկ նա իր հերթին հայտնում եր բրիգադներին:

Համառոտ կպատմեմ թե մենք ինչպես եյինք փոխում ցանքի նորմաները, յեթե սերմի ծլունակությունն ու մաքրությունը նորմայից ցածր եր ստացվում:

Իմանալով սերմի մաքրությունը և ծլունակությունը, մենք հաշվում եյին նրա տնտեսական պիտանիությունը: Դրա համար մաքրության չափն արտահայտող թիվը բազմապատկում եյինք ծլունակության առկոսն արտահայտող թիվով և ստացած արտադրյալը բաժանում 100-ի:

Ըսդհանրապես ցանքի նորմաները սահմանվում են այնպիսի սերմերով, վորոնք ունեն տնտեսական պիտանիության 95 տոկոս: Յեթե կոլտնտեսության մեջ յեղած սերմի տնտեսական պիտանիությունը ցածր ե, ուրեմն ցանքի նորման պետք ե բարձրացնել: Այսպես յեթե 95 տոկոս տնտեսական պիտանիության գեպքում գարնանցան ցորենի համար սահմանված ե մի հեկտարին 110 կգ ցանքի նորմա, իսկ կոլտնտեսության ցորենն ունի միայն 83 տոկոս տնտեսական պիտանիություն, այդ գեպքում ցորենի ցանքի նորման հաշվում են այսպես, 110-ը բազմապատկում են 95-ով և արտադրյալը բաժանում 83-ի: Ստացված է 114 կգ:

Մեզ շատ մտահոգություն պատճառուից «միննեգոտա» յեղիպտացորենի սերմը: Կրեմենչուգի փորձնական կայանը շատ ցած գնահատական եր տվիլ նրան՝ ծլմոն 25 տոկոս: Մենք շատ ուշադիր ստուգեցինք այդ սերմը

և գտանք, վոր Կրեմենչուգի կայանը սխալվել եւ իրականութ յեզիպտացորենն ուներ 58 տոկոս ծլունակություն։ Խրճիթ-լաբորատորիան հաշվեց թե այդպիսի ծլունակության դեղքում վորքան պետք եւ ցանել մի հետարին և ձեր բրիգադներն ընդունեցին այդ նորման։

Խրճիթ-լաբորատորիան նաև այսպիսի խնդիր եր դրել՝ յուրաքանչյուր կուլտուրայի համար սահմանել քավագույն ժամկետ, վորպեսզի ցանվի այնպիսի ջերմաստիճանի ժամանակ, վորն անհրաժեշտ եւ լավագույն ցանքի համար։ Ազրովանոններից մենք իմացանք, թե ողի վոր ջերմաստիճանն եւ լավագույնը այս կամ այն կուլտուրայի ցանքի համար (զվարապես ուշ հասնող՝ ջերմություն սիրող կուլտուրաների նկատմամբ) և սկսեցինք ջերմաստիճանի դիտողություններ կատարել։

Այսպես՝ ապրիլի 10-ին ջերմությունը 12 աստիճան եր, Խրճիթ-լաբորատորիան բոլոր բրիգադներին և յանեց, վոր ջերմության տվյալ պայմաններում կարելի յեւ սկսել կարտոֆիլի և յեփիպտացորենի ցանքը։ Յեզի բրիգադներն անմիջապես գործի անցան։

Ծնորհիվ ջերմաստիճանի դիտողությունների, մեր կոլտնտեսությունը կարտոֆիլի և յեփիպտացորենի ցանքը Կրեմենչուգի շրջանի մյուս կոլտնտեսություններից ավելի վաղ կատարեց։ Մեզ մոտ այդ կուլտուրաներն արդեն ցանել ելին, մինչդեռ մյուս կոլտնտեսությունները ցանելու համար Կրեմենչուգից կարգադրության ելին սպասում։ Իսկ արջուղաժինը կարգադրությունների մասին առաջարկություններից համար կողմանը առաջին որերի հաշվետությունն ուղարկել ընկ։ Պոտիշելիքներից ցանքի լավ ժամանակն անցկացրին։

Այսուհետեւ անցյալ գարնանը մեզ մոտ մեծ վեճ յեղավկարեկի մասին։ Յեղանակին նայելով՝ արդեն ցանելու ժամանակն եր, կորեկի ցանքի համար ողի ջերմաստիճանը միանգամայն բավարար եր։ Բայց և այնպես շատ կոլտնտեսականներ գտնում ելին, վոր պետք եւ գեռ սպասել։ Ասում ելին, թե հողը դեռ չոր ե (իսկապես 1934 թ. գարնանը մեզ մոտ շատ չորային եր), պետք եւ սպասել անձրենների, վորից հետո կսկսեն կորեկի ցանքը։

Այդ ժամանակ մենք՝ Խրճիթ-լաբորատորիայի ակտիվիստներս վորոշեցինք այդ վեճի լուծումը մեզ վրա վերցնել։ Հավաքեցինք ծեր կոլտնտեսականներին և նրանց հետ գնացինք այն հողամասը, վորտեղ պետք եւ կորեկ ցանքեր։

Ծերունիները հողը քանողեցին, վոր տեսնեն թե իսկապես չօրացել ե. պարզվեց վոր հողը դեռ խոնավ ե. այսուեղ արգեն թերահավատներն ել ստիպված ելին համաձայնել, վոր կորեկը կարելի յեւ պետք եւ ցանել։ Ձեզ կոլտնտեսությունը ցանքն սկսեց։

Յեզ լավ եր, վոր այդպես յեղավ, յեթե վոչ բնչ կլիներ, յեթե մենք նստեցինք ու անձրենների սպասեցինք։ Ծառ կոպանելինք։ Անցյալ տարի մեզ մոռ չորային եր, վոչ ապրիլին, վոչ մայիսին փոքրիշատե կարգին անձրեններ չեկան։ Կորեկի ցանքը պետք եւ ուր տեղը յետ ընկներ։

Ի՞նչՊԵՍ ՎԵՐՑՇԻՆՔ ՀԱԴԻ ՆԱԽՈՒՆԵՄԸ

Վորովհետեւ մեր կոլտնտեսությունն ամենից առաջ եր Խրճիթ-լաբորատորիա, կազմակերպել, մեր պարտքը համարեցինք մեր աշխատանքի առաջին որերի հաշվետությունն ուղարկել ընկ։ Պոտիշելիքներից

Այդպես ել արինք: Ապրիլի 11-ին յես հաշվեակությունն ուղարկեցի, վորը հետագայում շատ թերթերում տպագրվեց: Դրանից քիչ հետո, յես և խրճիթ-լաբորատորիայի խմ ոգնականները՝ հարվածային կոմյերիտականները՝ Պավել Պետրովիչից այսպիսի պատասխան ստացանք:

«Վոդունում եմ ձեր նախաձեռնությունը Կոլտնտեսային անասության մեջ խրճիթ-լաբորատորիաներ կազմակերպելու բնողիր խոշոր և կարենը գործ ե: Յեթե գործը հասցնեք մինչև վերջ, իսկ յես գրանում չեմ կառկածում, այն քըեն կարգաբացնի հարցուրագատիկ անդամ: Առաջին անհջողություններից զուտ չվարանեք, համառ ու հաստատ կաժքով առաջ տարեր խրճիթ-լաբորատորիայի կազմակերպման գործը և գուշ հճաղթեք: Ազթօնվածության ոչախ խրճիթը կդրավի իր տեղը»:

Ընկ. Պոստիշեվի նամակից անմիջապես հետո ստացվեց Ռւկրաբնայի Հողժողկոմի վորոշումը: Հողժողկոմը հավանություն եր տալիս խրճիթ-լաբորատորիա կազմակերպելու գործին և Ռւկրաբնայի բոլոր կոլանտեսություններին առաջարկել եր հետեւ մերորինակին: Բացի դրանից, Հողժողկոմը խրճիթ-լաբորատորիայի սարքավորման համար մեղ 1000 ռուբլի յեր հատկացրել և Խարկովից գյուղատնտես Գոմոնին ուղարկեց մեղ մոտ՝ կոնսուլտացիայի համար: Ընկ. Գոմոնը խրճիթ-լաբորատորիայի ակտիվի հետ միասին մշակեց խրճիթի սարքավորման և գործունեյության ծրագիրը. բացի այդ, նա մեծ ոգնություն ցույց տվեց խրճիթի գործնական աշխատանքները կարգավորելու գործում:

Ընկ. Գոմոնի առաջարկությամբ մենք վորոշեցինք հավաքել մեր դաշտերի հողերի նմուշները, կամ, ինչպես

ասում են գիտնականները՝ հողային մոնոլիտները: Այդպիսի նմուշներ պետք ե ունենա յուրաքանչյուր խըրճիթ-լաբորատորիա: Մոնոլիտները վերցվում են այն հողամասերից, վորոնք ներկայացնում են կոլտնտեսության ամենից ավելի տարածված հողատեսակները՝ սեահող, աղուտներ, կավագաղցին, կավային, ավաղակավացին և այլն:

Իսկ ավելի լավ և վերցնել հողային մոնոլիտներ յուրաքանչյուր գաշտափարական բրիգադին ամրացված հողամասերից: Այդ գեղքում խրճիթ-լաբորատորիայում կստացվի կոլտնտեսային հողերի նմուշների լրիվ ժողովածու: Այդ ժողովածուի համաձայն կոլտնտեսությունը հաւրավորություն կունենա յուրաքանչյուր բրիգադի աղբուկանոնների մեջ փոփոխություններ մտցնել, նկատի առնելով բրիգադի հողամասերում յեղած հողերի առանձնահատկությունները:

Հողային մոնոլիտներ վերցնելու համար մենք դաշտ գուրս յեկանք չորս հոգով՝ յես, կոլտնտեսային դաշտափար Մաքուրը, բրիգադիր Դիմիտրիյ Պոխիտոնը և զյուզատնտես Գոմոնը:

Սկզբում անցանք աղուտ հողով ծածկված հողամասով և վորոշեցինք ամենից առաջ այդ հողի նմուշը վերցնել:

Դաշտափար Մաքուրը գետին գրեց հողային նմուշի համար նախորդք պատրաստված արկղը: Դա մի յերկար ու նեղ արկղ եր, բրիգադիր Պոխիտոնը բահով գետնի յերեսին ուղանելիյուն գծեց և սկսեց փոս փորել: Նա փոսը փորեց ճիշտ նույն խորությամբ, վորքան արկղի խորությունն եր: Հետո Պոխիտոնը հարթեց հողի այն կողմը, վոր կողմից վորոշված եր վերցնել նմուշը: Այնու-

Հետեւ նա ալդ կողմից արկղը չափեց և բահով սկսեց հողի մի շերտը կտրել վոր լուր չափով համապատասխաներ արկղի չափին: Այսպիսով փոսի յերկու կողմից և տակից կամաց կամաց կտրվում եր հողաշերտը, իսկ Պոխիտոնը հետզետեւ առաջ եր մղում արկղը:

Հողային նմուշը չկոտրելու համար Պոխիտոնը շատ գդուշ եր առաջ հրում արկղը:

Ենք հողաշերտը լցրեց արկղը, Պոխիտոնը կտրեց շերտը մինչև տակը և արկղը փոսից դուրս հանեց: Արկղի մեջ արդեն աղուտ հողի նմուշն եր: Նմուշի վերեկից յերեսում եր ճմի շերտ, իսկ հետո դեպի ցած հաջորդականությունը հետևյալն եր: Աև ֆոնի վրա յերեսում եյին գորշ շերտեր, ավելի ցած հողաշերտը դարչնագույն եր դառնում, իսկ մոնոլիտի ամենացածի մասերի վրա յերեսում եյին աև խըռութաբների հետքեր:

Այսուհետեւ Մազուրը ծածկեց փոսի բերանը, իսկ յետ արկղի յերեսն ապակի քաղեցի: Այսպիսով, մենք վերցրինք հողի առաջին նմուշը և դրանով հիմք դրինք կորոնտեսային հողերի ուսումնասիրությանը:

Ենք նկարագրած ձեռվ մենք հողի յերկու նմուշ ևս վերցրինք՝ սնահողի և ավագուտի նմուշները: Սևահողը, ավագուտը և աղուտը մեր կոլանտեսության դաշտերում ամենատարածված հողերի տեսակներն են:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈԼԾՆՏԵՍԱՅԻՆ ԴԱՌ-  
ՏԵՐՈՒՄ

Վրա հասան աշխատանքի յեռուն որերը: Կոլարն-  
տեսությունում գարնանացանի մասսայական ցանքն  
սկսվեց: Բայց մեր խրճիթ-լարուրատորիայումն ել աշ-

խառանքերը կանգ չառան, ընդհակառակը, ավելի աշխաժացան: Մենք անցանք վարձնուկան աշխատանքների:

Սեր ամբողջ ակտիվը հավաքվել եր փորձն ի պլանը քննության առնելու համար: Յեկան՝ դաշտավար Մազուրը, ըրէգաղիններ՝ Դիմիտրի Պոխիտոնը, Կորնիենկոն և Վոլկը, այգեգործ Պյոտր Պոխիտոնը, բանչարաբուծ Պոպենկոն և ուրիշ շատերը:

Մազուրն առաջարկություն մտցրեց:

— Յերկորդ դաշտավարական ըրիգաղի հողամասում ընկ: Կորնիենկոն ցանել եր յարովիղացիայի յենթարկված սովորական կարտոֆիլ: Նույն տեղում կարտոֆիլ ցանքը կան, գոմաղբով և սիլվինիով պարագացված: Աա նաև կարտոֆիլի ցանք չպարարտացված հողում: Յես առաջարկում եմ այդ հողամասերում փորձներ կատարել:

Բրիգաղիր Կորնիենկոն սկսեց հակածառել:

— Ի՞նչ կարիք կա այստեղ փորձներ կատարելու, քանի վոր կարտոֆիլը ցանքած և տարբեր հողերում, պարզ ե, վոր տարբեր ել բերք կստացվի . . .

Բայց ընկ: Մազուրը նրան ճիշտ պատասխանեց:

— Վոր տարբեր բերք կստացվի, զա հայտնի յերացած այլ թե յարովիղացիայի յենթարկված կարտոֆիլը վնրքան ավելի բերքատու կլինի սովորականից, կամ թե գոմաղբը կամ սիլվինիով վնրքան կրարձրացնեն բերքը, մենք այդ չգիտենք այժմ: Իսկ այդ մեղ անհրաժեշտ եճիշտն իմանալ իսկ ճիշտը կարող ենք իմանալ միջոցով:

Մազուրի առաջարկության հետ բոլորը համաձայնեցին: Յեկ հենց տեկնուտեղն ել նշեցինք, թե կարտոֆիլ վոր հողաբաժինների վրա յենք կատարելու մեր գիտաղությունները:

Այդ հողաբաժինները քիչ չելին. գարնանից դուժազբով պարաբատացված, յարովիզացիայի յենթարկված կարտոֆիլի հողաբաժին, նույն ժամանակ գոմաղբով պարաբատացված սովորական կարտոֆիլի հողաբաժին, վոշենչով չպարաբատացված կարտոֆիլի հողաբաժին և այլն.

Մենք ճշտորեն գրանցեցինք բոլոր այդ փորձերը և վորոշեցինք յուրաքանչյուր փորձ ստուգել 100 քառակուսի մետրանոց հողաբաժիններում: Այդ հողաբաժինները պետք ե մշակելինք միաժամանակ և բերքը յուրաքանչյուր հողաբաժնից առանձին հավաքելինք:

Ցես հանդեմ յեկա գործնանշան ցւենի վրա փորձեր կատարելու առաջարկությամբ: Մեր կորտնտեսությունում ցանվող «լյուտենցինս» 062 և «մելյանոպուս» 069 ցորենի տեսակների մասին զանազան կարծիքներ կային: Որինակ, յես գտնում եյի, վոր «լյուտենցինս» 062-ը մեզ մոտ ավելի լավ ե աճում, քան «մելյանոպուս» 069-ը:

Խրճիթ-լաբորատորիայում խորհրդակցության միջոցին Պոխիտոն Դիմիտրիին նույնպես հոգում «լյուտենցինս» 062-ի արտահայտվեց:

— 069 տեսակի ցորենը քիչ բերք ե տալիս 062 տեսակի ցորենի մի հեկտարից մենք 13 ցենտներից ավելի յենք վերցրել, մինչդեռ 069-ի հեկտարը լավագույն տարիներն ել միայն 8 ցենտներ ե տվել:

Բայց Կորնիենկոն նրա հետ չհամաձայնեց և առաց:

— Այդ գեռչի նշանակում, թե 069 տեսակի ցորեն չպետք ե ցանել, նա յերաշակին դիմանում եւ:

Խորհրդակցության ընթացքում ելի շատ թեր ու դեմ կարծիքներ յեղան յերկու տեսակ ցորենների վե-

րաբերյալ: Վերջապես մենք վորոշեցինք ցորենի յերկու տեսակի վրա ել դիտողություններ կատարել, առանձին հողաբաժինների վրա Վորոշեցինք դիտողությունները շարունակել մինչև բերքը հավաքել—վերջացնելը:

Մենք մի վորոշում են կայացրինք — փորձերի միջոցով պարզել, թե մեզ մոտ մշակվող յերկու տեսակ սիսեռից վարձ և լավ—«բիսմարկը», թե «ամերիկայի հրաշքը»: Մեզ ավելի շատ «բիսմարկն» եր դուք գալիս, նու ավելի շատ բերք ե տալիս, զուտ հասնում ե և լավ դիմանում ե շատ վտանգավոր վնասատու զերնովկայի հարձակմանը: Բայց միաժամանակ, մենք դեռևս չելինք կարողանում վերջնականապես ասել, թե «բիսմարկն» «ամերիկայի հրաշքից» լավ ե: Վորպեսզի վերջնական կարծիք կազմեյինք, վորոշեցինք յերկու տեսակի սիսեռն ել փորձել:

Ըստունված վորոշումները՝ մենք շատ չուտով սկսեցինք կիրառել կյանքում:

Գարնանայցան ցորենի փորձերը մենք կատարում ենք յերրորդ բրիգադի (Կորնիենկոյի) հողամասում:

Մի հողամաս՝ 075 հեկտար տարածությամբ՝ մենք դրազեցրինք 069 տեսակի ցորենով, նույնպիսի մեծությամբ մի այլ հողաբաժնում ցանեցինք 062 տեսակի ցորեն: Յերկու հողաբաժնում ել ցանքը կատարեցինք միևնույն որը. բերքը նույնպես յերկու հողաբաժնից ել միևնույն որն ել հավաքեցինք: Յուրաքանչյուր հողաբաժնի բերքն առանձին եր հավաքվում և առանձին ել հաշվում:

Կարտոֆիլի վրա փորձերը նույնպես հաջողվեց կատարել (Ճիշտ ե՝ վոչ այն չափով, ինչպես նախատեսել ելինք): Այդ դործը կատարեցինք մասսայական ցանքի

ժամանակ, միենույն յերբորդ բըհքաղի հողամասում:  
Յերկու փորձնական հողաբաժին առանձնացրինք, զո-  
րանցից մեկում, ինչպես և մնացած ամբողջ դաշտում,  
սպորական կարտոֆիլ ցանեցինք, իսկ մյուսում՝ ակա-  
զեմիկ լիսենկոյի մեթոդով՝ յարովիզացիայի յենթարկ-  
ված կարտոֆիլ:

Ցես և մեր իրածիթ-լաբորատորիայի մյուս ակտի-  
վիստները խոշոր նշանակություն ենք տալիս կարտոֆիլի  
յարովիզացիային. մեր կողմերն ավագուտ հողեր շատ  
կան, հողը շատ շուտ տաքանում և կարնանը հաճախ լի-  
նում են տաք ու չոր յեղանակներ: Ցանված կարտոֆիլն  
անմիջապես ընկնում և չափազանց բարձր ջերմաստի-  
ճանի անբարեհաջող պայմանների մեջ, նրա հետագա-  
զարդացումը դժվարանում է:

Ուստի թե ինչու կարտոֆիլի յարովիզացիայի կողմ-  
նակիցները խորհուրդ են տալիս վորոշ ժամանակ  
կարտոֆիլի պալարները ցուրտ տեղ պահել: Դրանից հե-  
տո կարտոֆիլն սկսում է արագ աճել:

Առաջ մեր կոլտնտեսականներից շատերը կարտոֆ-  
իլի յարովիզացիային մեծ կասկածով եյին վերաբերվում:  
Բայց խրճիթ-լաբորատորիայի անցյալ տարիվա փորձե-  
րը նրանց համոզեցին յարովիզացիայի ոգտավեալ լինելը:  
Յարովիզացիայի յենթարկված կարտոֆիլն աճեց սո-  
վորական կարտոֆիլից արագ և նրանից շուտ ել ծաղ-  
կեց, չնայած վոր նրանք միաժամանակ եյին ցանվել:  
Համարյա թե հուլիսի 10-ից սկսած՝ յարովիզացիայի  
յենթարկված կարտոֆիլի բերքը կոլտնտեսականների  
հասարակական դաշտային մննդի գործում ողտագործ-  
վում եր: Հենց միայն այդ հանգամանքը բավական եր  
ցըելու կարտոֆիլի յարովիզացիալի մասին յեղած բո-  
լուք կասկածները:

Մենք կարտոֆիլի հողամասը պարագացնելու վոր-  
չեր ևս կատարեցինք: Փորձնական հողաբաժինները  
մնոք գոմաղբով և սիլվինիաով պարարտացրինք:

Դոմաղբով պարարտացված հողի կարտոֆիլը լով  
գուրս յեկավ, ծեց ավելի շուտ, քան չպարարտացված  
հողի կարտոֆիլն եր և ավելի շուտ ել հասավ:

Իսկ սիլվինիաը կարտոֆիլի վրա վոչ մի աղդեցու-  
թյուն չունեցավ: Դրա մեղագորը մենք ինքներս եինք  
խրճիթ-լաբորատորիայի աշխատակիցներս. սիլվինիաը  
մնոք հողը մտցրինք մեծ ուշացումով, շատ գեղքերում  
նույնիսկ կարտոֆիլը ցանելու ժամանակ. հողին այս-  
պես ուշ խառնված սիլվինիաը չլուծվեց հողի մեջ, իսկ  
շուծված պարարտանյութը բույսի արմատները չեն  
կարող յուրացնել:

### ՅԱՆՔԵՐԻ ՀԵՏՈԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Դաշտային հողամասներում խրճիթ-լաբորատորիան  
շանքերը հետազոտելու գանազան աշխատանքներ կազ-  
մակերպեց:

Յարովիզացիայի յենթարկված և հացահատիկային  
գերվաղ կուլտուրաները հետազոտում եյինք յես ու  
դաշտավար Մաքսիմ Մազուրը Կոլտնտեսությունն ու-  
ներ 11 հեկտար յարովիզացիայի յենթարկված և 14  
հեկտար գերվաղ կուլտուրաների ցանք: Մեր հետազո-  
տությունները հատուկ տեսրակում գրի ելինք առնում.  
որինակ՝ նշանակում եյինք յարովիզացիայի յենթարկ-  
ված և գերվաղ կուլտուրաների ցանքի ժամանակը,  
սերմը ցանելու և հողում թաղելու ձևերը, թաղելու  
խորությունը, ծիլերն յերեալու ժամանակը, յերը և  
սկսում թփակալումը, յերք են ծիլերը ցողունակալում,  
հասկակալում, ժաղկում և այլն:

Մյուս ցանքերը հետազոտելու գործին մենք ներգրավեցինք բրիգադինք բրիգադինք և ծեր կոլտնտեսականներ Անտոն Մամենկոյին, Վասիլի Տրոխիմենկոյին, Դիմիտրիյ Պոխտոնին և ուղիղներին։ Յես նրանց տեսրեր բաժանեցին, ուր նրանք նշանակում եյին իրենց դիտողությունները։ Տեսրերը կազմված եյին մոտավորապես նույն ձևով, ինչպես լարովիզացիայի յենթարկված և գերվաղ կուլտուրաների տեսրերն եյին։

Նման հետազոտություն կազմակերպելով, խրճիթ-լաբորատորիան նպատակ եր զրել պարզել՝ թե ինչպես հն աճում տարբեր կուլտուրաների զանազան տեսակները տարբեր պայմաններում՝ սեահողում և այլ տեսակի հողերում, գերվաղ և սովորական վաղ ցանքի դեպքում, պարարտացնելու և չպարարտացնելու դեպքերում և այլն։

Մեծ քանակությամբ այդպիսի դիտողություններ հավաքեցինք։ Յերբ մենք այդ բոլորը կարգի բերենք, կոլտնտեսությունը հնարավորություն կունենա՝ համաձայն հողի վորակի՝ զանազան ուղղումներ մտցնել ագրոտեխնիկայի մեջ։ Խոնավ հողի ցանքի ժամկետը կարելի լի վորոշ չափով հետաձգել, սակայն շուրջող հողերում պետք է ցանել մինչև կոլտնտեսության ընդհանուր ցանքն սկսելը։

Յերբ մենք կուսումնասիրենք խրճիթ-լաբորատորիայի ակտիվիտաների 1934 թ. գարնանը և ամառը կտուարած գրանցումները, կարելի կլինի մի խոշոր գործ ևս կատարել։ Կարելի կլինի այդ դիտողությունների համաձայն աղյուսակներ ու դիտագրամներ կազմել և կախել խրճիթ-լաբորատորիայում։ Այդ ժամանակ մենք կարող ենք պարզուշ կերպով տեսնել մեր դաշ-

առելը՝ վորտեղ և ինչպիսի հողեր կան, ինչ բերք և տավակ յուրաքանչյուրը. դա մեր կոլտնտեսության գաշտերի իսկական պատկերը կլինի։

Իհարկե, խրճիթ-լաբորատորիայի ակտիվիտաներս մենակ չենք կարող գլուխ հանել աղյուսակներ ու դիտագրամներ կազմելու աշխատանքից։ Մեզ պետք և ոգնեն մասնագետները և մասնավորապես կրեմենչուզի Համ. Կ(բ)Կ շրջկոմի նախաձեռնությամբ վերջերս կազմակերպված կոլտնտեսային խրճիթ-լաբորատորիաներին ոժանդակող ագրոտեխնիկական կոմիտեն։

Վորպեսողի ավելի լավ տեսանելի դարձնենք մեր կոլտնտեսության դաշտերի գեմքը, վորոշել ենք 1935 թ. ցանքերի վերաբերյալ մի շարք նոր հետազոտություններ կատարել։

#### ՓՈՐՁԵՐ ՆՈՐ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խրճիթ-լաբորատորիային կից գտնվում և նրա անամերձ հողամասը։ Նոր կալտուրաների վարձերը մենք կատարում ենք այդ հողամասում։

Մենք աննպատակահարմար գտանք այդ փորձերը կոլտնտեսային դաշտում կատարել։ Մի կողմից՝ ամեն մի նոր կուլտուրայի սերմից մենք շատ քիչ ունեինք և յերկորդ՝ յեթե ունենալինք ել, միհնույն և, չի կարելի։ Նոր կուլտուրաները միանդամից ցանել դաշտային պայմաններում, քանի վոր այդ կուլտուրաներից շատերը մեզ միանդամայն անծանոթ եյին և մենք առաջին անգամն ելինք փորձում։ Միթե կարելի լիր գուշակել, թե նրանք բոլորը մեր պայմաններում լավ կաձեն։ Նոր կուլտուրաներից մի քանիսը կարող ելին մեր պայմաններին բոլորովին չհամապատասխանել,

Յեզ ընդհանրապես մեր փորձնական աշխատանքներում մենք գեկավարվում ենք հետեւալ կանոնով՝ այն փորձերը, թերոնի կասիվում են վորու ոփակի հետ յեզ կարող են անհաջողությամբ վերջանալ, կատարել խճիքրաբացօրիտին կից նորմանասում՝ մոտ 1,25 հեկտարաշատության վրա յեզ վոչ թե կոլենտեսական ընդհանուր դաշտում:

Այդ հոդը 1934 թվի գարնանը մենք բաժանեցինք 50 մասի: Այդ հողաբաժիններում մենք ցանեցինք ազկաննեփ, քնջիթ, գետնանուշ (արահիս), մեքսիկական և մորու (Յամանիչիե) տոռատ ու կրիմենչուլիք կոլտնտեսությունների համար այլ նոր կուլտուրաները: Այդ հողաբաժիններում մեր կոմյերիտականները մեծ յետանդուկ ենքն աշխատում: Նոր կուլտուրաներ աճնցնելու փորձերի հոգսը համարյա ամբողջովին դրված եր կոմյերիտմիության վրա. Խրճիթ-լաբորատորիան այդպիսի համաձայնության եր յեկել կոմյերիտմիության բջիք հետ:

Մեր կոմյերիտականներն ու կոմյերիտունիները նոր կուլտուրաների հողաբաժիններում աշխատում ենքն աշխատանքի ժամերից դուրս: Պատահում եր շատ անգամ, վոր առավոտը վեր եյինք կենում շատ վագ, մինչ արևածագը և շտապում խրճիթ-լաբորատորիայի փորձնական հողամասը: Այստեղ նրանք սկսում եյինք բաղել մոլախոտը, ուրագներով վափիկացնել հողը, կամ թե լրիւ փորձադաշտը:

Փորձադաշտի այդ բոլոր աշխատանքների գեկավարը յես եյի: Միշտ նոր կուլտուրաներ յես արդեւ փորձել եյի մինչև խրճիթ-լաբորատորիայի կազմակերպումը, այնպէս վոր փորոշ փորձ արդեն ունեյի: Կու-

չեքիտականներն իմ խորհուրդները լսում եյին մեծ ուշագրությամբ: Նրանք աշխատում ենքն մեծ վողեվարությամբ: Ահա լավագույն կոմյերիտական փորձարարների անունները:

Առաջին գաշտավարական բրիգադի ողակավար Կորնիկենկո Մարուսիան: Կոմյերիտմիության բջիջը վատահել եր նրան փորձադաշտի հողաբաժիններից մեկը. վորտեղ ցանված եր նոր թեկատու կուլտուրա: Նա ճշշտապահությունների հողաբաժնում, բայց և իր ողակի աշխատանքներից ել: Բոլորովին յետ չեր մում: Մարուսիան 25 դրամ կանատիկ (Կանատիկ) եր յանել, բայց յերեք կգ սերմ ստացավ. Կանատիկի թելի վորակը գեռ չենք վորոշել (իսկ նա մշակվում ե առաջին հերթին վորակն թեկատու բուզու):

Յերկրորդ գաշտավարական բրիգադի ողակավար Մուխա կլավդիան: Նրա խնամքին եր հանձնված տըզ-կանեփի փորձադաշտը (յուղատու բուզու ե): Ցանված 25 հատիկից 2 կգ սերմ ստացվեց, չհաշված այն սերմերը, վեր փորձադաշտի այցելուները վերցնում եյին փորձի համար:

Կոմյերիտունիկ Պոյասուկ Մարուսիան մշակում եր մեծ շատ հետաքրքիր նոր կուլտուրա, վորը կոչվում ե արախիս կամ գետնանուշ: Նրա ծաղիկները թաղվում են հողի մեջ և պտուղը միայն հողի մեջ կարող ե համանել: Ենորհիկ Մարուսիայի հոգատար վերաբերմունքի, արախիսը մեղ մոտ շատ լավ բերք տվեց: Ընդամենը վեց թուփի ունեյինք, վորոնցից հավաքվեց մի կգ գետնանուշը:

Խռաջին գաշտավարական բրիգադի կունտեսական՝ կոմյերիտական Սորիս Ալեքսանդրը փորձնական հողա-

բաժնում ցանել եր զանազան տեսակի անթառամ ծաղկներ (կանգուն, պոչավոր և այլ տեսակներ). յեթէ ցանքը հեկտարի փերածենք, մի հեկտարից ստացվեց 1500 փութ կանաչ մասսա, վորից շատ լավ սիլու կտացվի:

Յուրաքանչյուր նոր կուլտուրա մենք զբանցում եյնք նրա վրա խնամք տանող կոմիտականի հաշվին: Մարուսիա Տկաչելվան խնամում եր գետնատանձի ցանքը: Կուշներենիո Սերգեյը՝ կերի նոր բուր տեֆփի ցանքը և այլն:

Խրճիթ-լաբորատորիայի փորձնական դաշտում կարտոֆիլի ծիլերի և սերմից ստացված կարտոֆիլի տընկեան փորձեր ևս կատարվեցին: Դրանք շատ հետաքրքիր փորձեր են: Յեթէ տնկաշիվը կամ սերմից ստացված կարտոֆիլի ցանքը նույնքան բերք տա, վորքան սովորականը, դարձյալ տնկման այդ նոր ձևերից շատ մեծ ոգուտ կոտացվի: Յերկու գեղքումն ել տնկման մատերիալ անհամեմատ քիչ և պահանջվում, քանի առերգով ջական պարարներ կամ նրանց մասերը տնկելու դեպքում:

Կարտոֆիլի այդ փորձերի կատարման գործը խրճիթ-լաբորատորիան հանձնարարել եր Արինա Միխայլովնա Կուլնոսինյին: Նա արդեն հասակն առած կին և, բայց աշխատանքի մեջ յերիտասարդներից վոչնչով պակաս չե: Նա ինքը պատրաստեց յարովիզացիայի համար կարտոֆիլը և ցանեց փորձնական նպատակով: Նրան հատկապես հաջողվեց կարտոֆիլի տնկաշիվի ցանքը: Նա ծեցրեց կարտոֆիլի պալարները և հետո նրանցից առանձնացրեց ծիլերը: Այդ տնկաշիվերը տնկվեցին մի փոքրիկ հողամասում: Յեթէ այդ հողաբաժինը հեկտարի

փերածելու լինենք, գուրս կտա, վոր տնկաշիվի միջոցով կարտոֆիլի ցանքը մի հեկտարին տալիս ե 350 ցենտ ներ կարտոֆիլ:

ՊԱՅՔՈՐ ԳԵՌԻՂԱԾՆԵՍԱԿԱՆ ՎՆՍՍԱՏՑԻՆԵՐԻ ԳԵՄ

Դեռևս ապրիլ ամսին, ցանքի ժամանակ, իմ ողնական կոմիտերիտականները հավաքում եյին մեր կողմերում յեղած վնասատուների կոլեկցիաները: Հավաքել եյին զանազան բղեղների, թիթեռների թթվուրչների և միջատների ձվերի կոլեկցիաները: Յերբ ցանքը վերջացավ և վնասատուները կարող եյին արդեն յերեալ խրճիթ-լաբորատորիան առաջարկեց իր ակտիվիտաններին (գլխավորապես կոմիտերիտականներին) ուժեղացնել հըսկ կողությունը վնասատուների վրա, իմանալ, թե վորտեղ և ինչ դրության մեջ են վնասատուները, ինչպես են զարգանում նրանք, յերբ և սպասվում նրանց մասական յերեալը և այլ նման խնդիրները:

Խրճիթ-լաբորատորիան մենք գործընք վնասատուների վրա հսկողություն ունենալու և նրանց գեմ պայքարելու մի շտար:

Շուտով կոմիտերիտականներն սկսեցին վնասատուների յերեալը մասին տեղեկություններ հայտնել և նրանց նմուշները խրճիթ-լաբորատորիա բերել: Յես շաբունակում եյի նրանցից կոլեկցիաներ կազմել, վորովեսպի կոլանտեսականներն իրենց բերքի թշնամիների, ինչպես ասում են՝ «դեմքը» ճանաչեյին: Ամեն անգամ յերբ բերում ելին ինձ մոտ գաշտից, բանջարանոցից կամ այդուց գտած վնասատունը յես գտնում եյի նրա անունը (յես ունեյի գյուղատնտեսական վնասատուները վորոշելու հատուկ գրքույի) և գրում ինձ մոտ, վոր

այսինչ կոլտնտեսականը, այսինչ որը, այսինչ բույսի վրա գտավ այս վնասություն:

Խըճիթ-լաբորատորիայի աշխատանքի այդ մասը մեր գպրոցական փոքրիկ աշակերտներին շատ հետաքրքրէց: Նրանք սկսեցին շատ զանազան տեսակ միջատներ բերել ինձ: Յերենմն ել տեսնում ես մի տարորինակ քար կամ խեցի բերեցին: Յերեխաների ողնությամբ շատ հեշտ կարելի կլինի գտվառագիտական տեղական թանգարան կազմակերպել: Խըճիթ-լաբորատորիան այդ ել պետք ե նկատի ունենա:

Այս կամ այն վնասատուի դեմ պայքար կազմակերպելու գործում խըճիթ-լաբորատորիան խոշոր աշխատանք կատարեց: Որինակ, մի անգամ խըճիթ-լաբորատորիայի ակտիվիտաներն ինձ հայտնեցին, թե կերի ճակնդեղի վրա ճակնդեղալին լերկարակների (СВЕКЛОВИЧНЫЙ ДОЛГОНОДСНИК) և յերկացել: Խըճիթ-լաբորատորիան անմիջապես կազմակերպեց գորոցական մոտ 40 աշակերտներից բազկացած մի խումբ և դուրս բերեց ճակնդեղի դաշտ: Աշակերտներն սկսեցին առուներ քանդել և հավաքել ու վոչչացնել վնասատուներին. այսպիսով մենք համարյա ամբողջ գաշտն ավատեցինք այդ վնասատուներից. 35 հեկտար ճակնդեղի դաշտից կնէիթավորները լերկու հեկտարից ավելի չելին մնասել:

Մենք պայքարեցինք հացի կուտկա բզ'ողի (յու կյանք) գեմ: Այս անգամ արդեն դուրս յեկան թի գպրոցականները և թե մեծերը: Որ եր լինում, վոր մի ցենտներ բզեց ելինք հավաքում, իսկ յերբեմն՝ ել ավելի: Բայց պետք ե ասել վոր անցյալ տարի կուպկա բզեցը մեզ շատ վնաս տվեց: Նրա դմմ լավ միջոց ե հարուի (որ) ճիշտ և ժամանակին մշակելն ու վսակ յերեսվարք:

Մեր խըճիթ-լաբորատորիայի խնդիրն և հետագալում պայքարել այդ ազրությունիկական միջոցառություններն անշեղություն կիրառելու ուղղությամբ:

Մեր կոլտնտեսությունը մեծ ազնվամուրա (մալինուկ) ունի: Խըճիթ-լաբորատորիայի ակտիվիտաները նկատել եյին, վոր աղնվամորուառում վորդ և յերեվացել, վորն սկսել ե խիստ վնասական նրան:

1934 թ. մենք գեռ չունեյինք այգեգործական հասառակ բրիգադ և խըճիթ-լաբորատորիան կոլտնտեսականներին վնասատուների դեմ պայքարելու կոչ արեց:

Կոչն անհետնանք չմասց: Տամյակ կոլտնտեսականներ ազնվամորուառ յեկան և խըճիթ-լաբորատորիայի զեկավարությամբ սկսեցին առու քանդել ու առվով շրջափակել աղնվամորուառի վորդով բռնված մասը: Վնասատուների հետագա ճանապարհը կարված եր: 30 հեկտարից 28-ն ազատված եր:

Մեզ մոտ 70 հեկտար մատղաշ այդի յեր անկված: Ձեզ ահա խըճիթ-լաբորատորիայի ակտիվիտանները նկատում են, վոր մասպաշ խնձորենու տերեմներն սկսում են թառամել: Մենք սկսեցինք պատճառները պարզել և դուռնք, վոր նոր այգիները ջրի կարիք ունեն, ուրեմն ծառերը պետք ե ջրել: Բայց նման խոշոր գործի համար վորտեղից վերցնել բանվորական ուժ: Յեվ գարձակ խըճիթ-լաբորատորիան կոլտնտեսականներին այցուն կամավոր ոգնություն հասցնելու կոչ արեց:

Յեվ կոլտնտեսականներն անմիջապես արձագանքեցին կոչին: Լույսը գեռ նոր եր բացվել վոր այգին արդեն լին եր ծեր ու յերիտասարդ կոլտնտեսականներուի: Դույլերը ձեռներին՝ մարդիկ արագությամբ

Հուր եյին կրում: Խոնավության պակասից պապակված պտղատու ծառերը 2-ական դույլ ջուր սաացան:

Դաշտում աշխատանքները դեռ չեյին սկսվել վոր այդին արգեն ջրված եր:

Մի քիչ ժամանակ անցնելուց հետո մենք այդին սորից ջրեցինք: Կոլանտեսականներն իրենց այզի կորստից փրկեցին: Այդին վերակենդանացավ և տերենների թոշնումը դադարեց: Իսկ միքանի որ հետո սկսեցին անձրւները և վտանգը բոլորովին անցավ:

ՅԵՊԱՆԱՒԻ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1934 թվին բնությունը մեր կոլտնտեսությունից յերես եր գարձրել անձրեւ չեր գալիս, ամառը, մասնավորապես նրա առաջին կեսը, շատ չորավին եր: Այդ ժամանակ ամեն մի անձրեւ մեղ համար մեծ հարստություն եր թվում: Անա թե ինչու խրճիթ-լարորատորիան մեծ հետաքրքրությամբ դրազվեց ողերեվութառնական դիտողություններով<sup>1)</sup>:

Խրճիթ-լարորատորիայի անսամերձ հողամասում, փորձարաշտի կողքին, մենք տեղ հատկացրինք ողերեւութառնական կայանին: Մի բարձր սյունի վրա մենք գրինք անձրւաչափը: Դա հատուկ կոնուսի ձեռվ մի թիթեղյա գործիք եւ Այդ կոնուսի լայն մասը դարձված է դեպի վեր, իսկ ցածի նեղ մասին ամրացված և հատակը թերը անձրեւ ե զալիս, անձրւաչափի դակ ջրի մի շերտ և մնում զանազան բարձրության՝ նայած թե վորքան անձրեւ յեկել: Ջրի այդ շերտը չտփում է միլիմետրով:

1) Աղերեփութառանությունը մի գիտություն է, վոր յեղանակի առութասիրությումը և դրազվում:

Անձրւաչափի և մյուս ողերեւութառնական գործիքների գիտողությունը յես եյի կատարում: Ինչ ցույց են տալիս այդ գործիքները, աշխատում եմ ձըշտուեն գրանցել Յուլաքանչյուր տասն որը մեկ անգամ նրանց ցուցումների մասին հայտնում եմ կրեմենչուգի ողերեւութառնական կայանին: Իմ բացակայության ժամանակ զիտողությունները կատարում ե և գրանցում խրճիթ-լարորատորիայի ակտիվիտաներից մեկը՝ ծեր կուշներենկոն: Ողերեւութառնական դիտողություններ կատարելիս ինձ ոգնում ե կոմյերիտական վասիլիյ Ռոտապենիոն:

Բացի անձրւաչափից, մենք մի բարձր ձողի վրա քամիներն ուսումնասիրող գործիքներ դրինք: Այդ գործիքները ցույց են տալիս, թե քամին վոր կրղմից և փշում ե ինչ ուժով:

Մեր ողերեւութառնական կայանը ջերմաչափեր ել ունի՝ ողի ջերմաստիճանը վորոշելու համար. կարնանը և ամտուր, որական յերեք անգամ՝ առավուտը ժամը 7-ին, յերեկվա ժամը 1-ին և յերեկոյան ժամը 7-ին՝ յես չափում եյի ողի ջերմաստիճանը և արդյունքները գրում հատուկ տետրակում:

Ափսոս, վոր մենք հողի զերմաշափ չունենք, բայց մենք կաշխատենք անպատճառ ձեռք բերել Դա մեզ հարավորություն կտա ավելի ճիշտ վորոշել այս կամ այն կուլտուրայի ցանքի ժամանակը:

Մենք ձեռք բերենք նաև մի ծանրաչափ. աներախիդ (բարոմետր-աներուդ): Նա մեղ շատ մեծ ողում տվեց: Պատմեմ ձեզ, որինակի համար, այսպիսի մի դեպք:

Հուլիսի յերկրորդ տասնորյակին շատ շոգ և չորային:

յեղանակներ ելին։ Բայց ահա, ամսի 19.ի առավոտից ժամրաշափի սլաքը թեքվեց դեպի աջ՝ «անձրևի կողմը»։ Արծիթ-լաբորատորիան տնմիջապես մարդիկ ուղարկեց բաշտավարական բրիգադները, վորոնք այդ ժամանակ բացի նոր բերք ելին կալսում։ Ուղարկված մարդիկ դպուշցրին բրիգադիրներին, թե անձրև և սպասվում, պետք և պատրաստ լինել։

Բրիգադիրները՝ սկսում են անմիջապես ծածկել կալսիչի մոտ յեղած հացահատիկը։ Յեվ զուր չեր այդ պես վարվելը։ Կես որից հետո ծանրաշափն սկսեց ավելի ուժեղ իջնել, սլաքը թեքվեց «գործորկի կողմը»։ Քիչ հետո ստպեր յերկացին, վորոտի ձախներ լավեցին և սկսեց վարար անձրև տեղալ։ Ամբողջ ամառվա ընթացքում այդպես ուժեղ անձրև զեռ չեր յեկեր Բայց այդ անձրեց հացին վաս չտվեց, հացն ապահով ծածկված եր բրեկենաներով։

## ԿՈԼՏՆՏԵՍԱՑԻՆ ՀԱՅԱՀԱՑԻԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կրեմենչուրի շրջանի կոլտնտեսություններում առաջ էնդունված եր հետևել բերքը հասունանալուն։ Բայց դա պատահական բնույթ եր կրում և այն ել սիրողների կողմից։ Մեր խրճիթ-լաբորատորիան վորոշեց առաջ առանել այդ զործը կազմակերպված ձևով։ Հացահատիկների վրա հակողություն ունենալու հիմնական խնդիրը մենք համարում ելինք կոլտնտվարչությանը ճիշտ ժամանակին տեղեկություններ տալը, թե վոր արտն և արգեն հասել վորպեսզի կոլտնտեսականներն անմիջապես սկսեն բերքահավաքը։ Գետք եր կանխել հացահատիկի թեկուզ ամենափոքր կորստի հնարավորու-

թյունը՝ ահո թե ինչով եր մտահոգված խրճիթ-լաբորատորիան։

Հունիսի 25-ից սկսած, այսինքն՝ մասսայական հընձից 8 որ առաջ, խրճիթ լաբորատորիայի լավագույն ակտիվիտեներն սկսեցին շրջել դաշտերը, նայել հասկերը, հասկն ափի մեջ փշրել և հատիկը յեղունգով կարել՝ ստուգելու համար՝ թե չի հասել արդյոք հատիկը, այսպիսս կոչված՝ մոմային հասունության աստիճանին։ Մենք լավ գիտենք, վոր հացահատիկների բերքահավաքի լավագույն ժամանակը հատիկի մոմային հասունության աստիճանին համար ե, յերբ հատիկը յեղունգով մոմի պես կարվում ե։

Մոմային հասունության հասավ առաջին հերթին աշխանացան հացահատիվ կը, վոր բանված եր աղուաներում։ Այդ հունիսի 27-ին եր։ Մենք այդ մասին անմիջապես հայտնեցինք կոլտնտվարչության և հաջորդ որը մեր ցուց տված արտերում աշխատում ելին հնձող մեքենաները։

